## ԱՅ.ԱՐ.ԴԻ. ԷՆՋԻՆԻՐԻՆԳ Սրլ

***Այ.Ար.Դի. Էնջինիըրինգ*** ընկերությունը, առաջատար իտալական ինժեներական խորհրդատվական ընկերություն է, որն առաջարկում է ճանապարհների, երկաթուղիների, կամուրջների, օդանավակայանների, կառուցվածքների, ջրային և էներգետիկ ենթակառուցվածքների բազմակողմանի լուծումներ ամբողջ աշխարհում: Լիովին անկախ լինելով որևէ շինարարական և արդյունաբերական խմբից, Այ.Ար.Դի. ընկերությունն առաջարկում է մի շարք ծառայություններ ինչպիսիք են՝ նախագծում, վերահսկողություն, տեխնիկական աջակցություն և գնումներ, (նախագծում և կառուցում, կոնցեսիա և այլն), պլանավորում և տեխնիկական հիմնավորում, տնտեսաֆինանսական ուսումնասիրություններ ծրագրի իրագործման բոլոր փուլերում՝ և՛ հանրային, և՛ մասնավոր սեկտորի պատվիրատուների համար:



***Այ.Ար.Դի. Էնջինիըրինգ*** աշխատակազմում ընդգրկված են քաղաքային ենթակառուցվածքների մասնագետներ, ծրագրի ղեկավարներ, ինժեներ-էլեկտրիկներ և ինժեներ-մեխանիկներ, ճարտարագետներ, քաղաքաշինության և ճանապարհաշինության նախագծողներ, նախագծման և կառուցապատման մասնագետներ, տնտեսագետներ և մարքեթինգի մասնագետներ, իրավաբաններ և գնումների մասնագետներ:

***Այ.Ար.Դի. Էնջինիըրինգ*** Եվրոպական հանձնաժողովի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Եվրոպական ներդրումային բանկի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի, Իսլամական զարգացման բանկի, ՆԱSO-ն և այլ ՄՖ ինստիտուտներ ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացման նշանակալի փորձառություն է ձեռք բերել:

***Այ.Ար.Դի. Էնջինիըրինգ*** ընկերությունը ստացել է ISO 9001:2015 որակի կառավարման համակարգի համապատասխանության սերտիֆիկատ (Որակի կառավարման համակարգ): Հավաստագիրը տրվել է «Բյուրո Վերիտասը» (Bureau Veritas) թեստավորման, տեսչական ստուգման և հավաստագրման հարցերով զբաղվող ֆրանսիական համաշխարհային կազմակերպության և վավերացվել է Իտալիայի հավատարմագրման ազգային մարմնի կողմից (ACCREDIA): Ավելին, ***Այ.Ար.Դի. Էնջինիըրինգն*** այս տարի ստացել է ISO 14001:2015 EMS Էկոլոգիական կառավարման համակարգի և ISO 18001:2007 OHSAS Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման կառավարման համակարգի համապատասխանության սերտիֆիկատ: Բյուրո Վերիտասի կողմից տրված և Բրիտանիայի հավատարմագրման ազգային մարմնի կողմից ճանաչված սերտիֆիկատը երաշխավորում է հետևյալ ոլորտներում որակի ապահովման ստանդարտները. ***Նախագծմանը նախորդող ուսումնասիրություններ,***

*ծրագրի կառավարում, նախագծում, աշխատանքների վերահսկողություն և տեխնիկական աջակցություն ենթակառուցվածքների ոլորտում:*

Բացի այդ, *Այ.Ար.Դի. Էնջինիրինգն* Ինժեներական, ճարտարագիտական և տեխնիկատնտեսական խորհրդատվական կազմակերպությունների իտալական ասոցիացիայի (O.I.C.E.) անդամ է ( http://www.oice.it/eng/): O.I.C.E. FIDIC-ի անդամ Ինժեներական խորհրդատվության ասոցիացիայի Եվրոպական ֆեդերացիայի (EFCA) իտալական ներկայացուցիչն է: ***Այ.Ար.Դի. Էնջինիրինգն ազգային ասոցիացիայի կողմից, FIDIC-ի չափանիշներին համաձայն հավատարմագրվել է և իրավասու է իրականացնել FIDIC -ով սահմանված Վերահսկողության գործառույթները:*** *Այ.Ար.Դի. Էնջինիրինգն* մասնաճյուղեր ունի Ալբանիայում, Հայաստանում, Ադրբեջանում, Աֆղանստանում, Բոսնիա և Հերցեգովինայում, Բուլղարիայում, Վրաստանում, Լիբիայում, Մակեդոնիայում, Մոլդովայում, Մոնտենեգրոյում, Սերբիայում, Ուկրաինայում, Ռուսաստանում, ինչպես նաև ենթակառուցվածքների հետ կապված ծրագրեր է իրականացնում Բելառուսում, Խորվաթիայում, Գանայում, Քենիայում, Կոսովոյում, Սվազիլենդում, Տանզանիայում և Ուգանդայում:

***Այ.Ար.Դի. Էնջինիրինգն*** **կառավարել է Միջազգային ֆինանսավորող ինստիտուտների կողմից ֆինանսավորված մի քանի ծրագրեր,** ***Այ.Ար.Դի.*** **ճանապարհաշինության ոլորտում ինժեներական խորհրդատվություն տրամադրող գործող ընկերություններից է, որը մայրուղիների, պետական և տարածաշրջանային ճանապարհների նախագծման և շինաշխատանքների/ վերանորոգման/ տեխսպասարկման աշխատանքների վերահսկողության բազմաթիվ ծրագրեր է իրականացրել:**

Հայաստանում *Այ.Ար.Դի. Էնջինիրինգը* սկսել է գործունեություն ծավալել 2015 թ-ից, իսկ վերջերս ***Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 4-ի տեխնիկատնտեսական հիմնավորման, նախնական նախագծման և մանրամասն նախագծի մշակման*** և ***Տրանշ 3-ի շինարարական աշխատանքների վերահսկողության*** ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել, վերջինիս իրականացվում է **ԱԶԲ** ֆինանսավորմամբ ***և*** աշխատանքները ներառում են **մայրուղու** մոտ **18,7 կմ** հատվածի արդիականացման/ բարելավման աշխատանքների վերահսկողություն՝ առաջնորդվելով FIDIC MDBH (շինարարական աշխատանքների միասնական պայմանագիր) պայմանագրի պայմաններով:

Սույն պայմանագրով սահմանված ծառայությունները ներառում են մոտ 304կմ ճանապարհի ***Նախնական նախագծում*** և ***Տրանշ 4-ի մոտ 60կմ ձգվող հատվածի մանրամասն նախագծի մշակում:*** Չնայած Սիսիան-Քաջարան հատվածը խնդրահարույց էր՝ լեռնազանգվածներով պայմանավորված, նախատեսվել է 7 թունել 11կմ ընդհանուր երկարությամբ և 26 կամուրջ՝ 3,6 կմ ընդհանուր երկարությամբ, 600մլն դոլար նախահաշվարկված արժեքով:

- ***Կազմել Տեխնիկատնտեսական հիմնավորում,*** այդ թվում՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Արտաշատի հարավից Քաջարան (28+912կմ – 333+000կմ) հատվածի ուսումնասիրություններ, ինժիներա-տեխնիկական հետազոտություններ, տվյալների հավաքագրում և տնտեսական վերլուծություն, ինչպես նաև սահմանել բարելավման կարիք ունեցող ճանապարհահատվածները,
- ***Նախնական նախագծում,*** այդ թվում՝ տեղամասային/դաշտային հետազոտություններ (բացառությամբ տեղագրական ուսումնասիրությունների՝ WGS 84 համակարգով և երկրաբանական հետազոտությունների, որը կատարվելու է մանրամասն նախագծման փուլում), մշակել համալիր

աշխատանքների պայմանագիր կնքել ծրագրի իրականացման համար, ինչպես նաև կազմել ՇՄԱԳ և ՀՕՏՊ:.

Ադրբեջանում 2016 թ-ին *Այ. Ար. Դի. Էնջինիըրինգ* սկսել է մի կարևոր ծրագիր, այն է՝ ***Նախագծի վերանայում և Նախագծման գործընթացի վերահսկողություն (հեղինակային վերահսկողություն)*** ***և Ganja-Gazakh տարածաշրջանում չորս կամուրջի և տեղական ճանապարհների շինարարություն՝FIDIC դեղին գրքի պայմանների համաձայն:***

*Այ. Ար. Դի. Էնջինիըրինգ* իրականացրել է Բաքու-Շամախի-Մուգանլի ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների վերահսկողություն՝ որպես Ինժեներ՝ ըստ FIDIC Կարմիր գրքի պայմանների: 2014 թ-ին *Այ. Ար. Դի Էնջինիըրինգը* ավարտեց ***Ադրբեջանի մայրուղու ծրագիր III-ը՝*** տրամադրելով տեխնիկական աջակցություն Ավտոճանապարհների կառավարման համակարգի և Ավտոճանապարհների կառավարման պրակտիկայի արդիականացման հետ կապված

Ավելին, Ադրբեջանում *Այ. Ար. Դի. Էնջինիըրինգը* 2016 թ-ին սկսել է Բաքու-Շամախի-Մուգանլի ճանապարհի ***շինարարական աշխատանքների վերահսկողությունը***, ծրագիրը ենթադրում է 30 կմ ճանապարհահատվածի բարելավման աշխատանքներ՝ FIDIC պայմանագրի պայմանների համաձայն: Իսկ նախորդ տարիներին *Այ. Ար. Դի. Էնջինիըրինգը* իրականացրել է *Hajigabul-Bahramtepe* ***ճանապարհահատվածի, Խմբ. 1, Խմբ. 2 և Կուռ գետի կամրջի և միացնող ճանապարհների վերահսկողություն*** ՝FIDIC պայմանների համաձայն, ՄԶԲ ֆինանսավորմամբ:



*Ադրբեջան, Hajigabul-Bahramtepe ճանապարհի վերահսկողություն, Կուռ գետի կամուրջ*

*Այ.Ար.Դի. Էնջինիըրինգի* կողմից Ադրբեջանում հաջողությամբ իրականացված և ավարտված ծրագրերի շարքում են՝ ***Բաքու-Շամախի ճանապարհի բնապահպանական կառավարման պլանի արդիականացում/ վերանայում, Ալաթ-Աստարա մայրուղու 32*** **կմ ճանապարհահատվածի շինաշխատանքների վերահսկողություն**, և ***Շամախի – Ագսու ճանապարհահատվածի այլընտրանքային ճանապարհների ընտրություն և տեխնիկատնտեսական հետազոտություն:***

2017թ-ին Ղազախստանում *Այ.Ար.Դի. Էնջինիըրինգը* շահել է երեք պայմանագիր, որոնք բոլորն էլ Ղազախստանում«Կուրթի-Բուրլիբաիթալ ճանապարհահատվածի վերանորոգում» անվանմամբ ճանապարհների նախագծման կարևոր ծրագրի մաս են կազմում:

- *Կուրթի-Բուրլիբաիթալ ճանապարհահատվածի վերանորոգման ծրագրի շրջանակներում Կենտրոն-Հարավային Միջանցք - 2214-2295 կմ հատված,*
- *Կուրթի-Բուրլիբաիթալ ճանապարհահատվածի վերակառուցում – 2295-րդ կմ-ից մինչև 2335-րդ կմ և 2335-րդ կմ-ից մինչև 2380-րդ կմ հատվածների շինարարության վերահսկողության աշխատանքների խորհրդատվական ծառայություններ,*
- *Կուրթի-Բուրլիբաիթալ ճանապարհահատվածի վերանորոգման ծրագրի երկարաձգում/ 2152-րդ կմ-ից մինչև 2214-րդ կմ:*

Վերոնշյալ բոլոր պայմանագրերը ներառում են գործողություններ՝ միտված

- **Ճանապարհի աշխատանքային նախագծերի վերանայմանը և քաղաքացիական շինարարության պայմանագրով նախատեսված ճանապարհների շինարարության գծագրերի հաստատմանը.**
- Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների իրականացմանը՝ ներառյալ տեղում սառը վիճակով վերակիրառությունը և ասֆալտ-բետոնե վերին շերտի տեղադրումը,
- Գոյություն ունեցող ճանապարհների և կամուրջների վերանորոգում և նորերի կառուցում,
- Համապատասխան դրենաժային համակարգի վերակառուցում,
- Ճանապարհային նշաններ և գծանշում:

Ռուսաստանում *Այ.Ար.Դի. Էնջինիըրինգը* գործունեությունն սկսել է 2017 թ-ի փետրվարին ***«Մոսկվայի Կենտրոնական օղակաձև ավտոճանապարհի (ԿՕԱ) » նախագծի վերանայում և շինարարական աշխատանքների վերահսկողություն*** ծրագրի շրջանակներում: Այս առաջադրանքը կատարել է Այ.Ար.Դի. Էնջինիըրինգ Պրոեկտը, որը մեր տեղական գրանցված ընկերությունն է Մոսկվայում, ՌԴ-ում: Մոսկվայի Կենտրոնական օղակաձև ավտոճանապարհի (ԿՕԱ) ստարտ-ափ N°3 համալիրի ծրագրի նպատակն է կառուցել Մոսկվայի շրջանի հյուսիս-արևելյան մասի ԿՕԱ-ի հատվածը, որը ձգվում է M-11 փոխհատումից (Մոսկվա/Սանկտ Պետերբուրգ արագընթաց մայրուղի) մինչև M-7 փոխհատում (հանրային մայրուղի): Ըստ պայմանագրի կատարվող շինարարության ընդհանուր արժեքը 64.1 մլրդ ռուբլի (մոտավորապես 1 մլրդ եվրո) է:

Բոսնիա և Հերցեգովինայում *Այ.Ար.Դի. Էնջինիըրինգը* ներկայումս կատարում է Բանջա Լուկա – Դոբոջ մայրուղու շինարարական աշխատանքների և աշխատանքային նախագծի վերահսկողության աշխատանքները, Պրնջավոր-Դոբոջ հատված (35+300կմ-ից մինչև 71+912.51կմ)՝ համաձայն **Պայմանագրի FIDIC նախագծման և շինարարության պայմաններ** (Դեղին գիրք): Ծրագիրը ֆինանսավորում է ՎԶԵԲ-ը, և նախատեսվում է **քառագիծ մայրուղու** (յուրաքանչյուր ուղղությամբ 2 երթևեկելի գիծ և մեկ արտակարգ իրավիճակների համար նախատեսված գիծ, ինչպես նաև պահակակետեր, սպասարկման տարածքներ, մայրուղիների սպասրկման կենտրոններ և տեխնիկական սպասարկման բաղադրիչներ, շարժման ընթացքում կշռի չափման տեղամասեր) 36.6 կմ հատվածի շինարարություն: *Այ.Ար.Դի.-ն* անցյալ տարի հաջողությամբ ավարտեց ***SEETO Route 2a: Lašva-Jajec-Ugar (Inter Entity Boundary Line)-Banja Luka - Banja Luka Bypass*** հատվածի բարելավման *Նախնական ուսումնասիրությունների և նախագծերի պատրաստման* պայմանագրով նախատեսված աշխատանքները: Ծրագիրը ֆինանսավորվել էր Եվրոպական Միության կողմից IPA ծրագրի շրջանակներում և ներառվել էր ընդհանուր 198 կմ երկարությամբ SEETO 2a-ի ճանապարհահատվածի բարելավման, վերանորոգման և շինարարության կոնցեպտային նախագիծ և նախնական ուսումնասիրությունների նախապատրաստական աշխատանքներում: Ավելին, *Այ.Ար.Դի.-ն* երկրում իրականացրել է մեկ այլ կարևոր ծրագիր, ***Գրադիսկա-Բանջա Լուկա մայրուղու աշխատանքային նախագծի, գնումների և FIDIC վերահսկողության համար,*** **քառագիծ չափանիշներին ամբողջապես համապատասխանող** նոր **մայրուղի**՝ ընդհանուր 26.7 կմ երկարությամբ՝ **ներառյալ 3 կցուղի, 9 վերգետնյա անցում, 5 ստորգետնյա անցում և 5 կամուրջ**՝ հիմնական ծրագծի վրա: Ծրագիրը ներառում էր վերահսկողության ծառայություններ՝ ըստ **FIDIC Պայմանագրի Կարմիր Գրքի Պայմանների:**

Ուկրաինայում *Այ.Ար.Դի. Էնջինիըրինգը* սկսել է ***M-03 Կիև-Խարկով-Դովժանսկի ճանապարհի 385+100 – կմ 395+064 (Ջուտովո կողանցում) հատվածի շինարարության այլընտրանքային նախնական նախագծերի մշակման համար խորհրդատվական ծառայությունները:*** Առաջադրանքի հիմնական նպատակն է տեխնիկական և տնտեսական տեսանկյունից համեմատել նշված ճանապարհահատվածների այլըտրանքային ճանապարհները: Այլընտրանքային ճանապարհների համեմատության գործընթացում Խորհրդատուն ապահովում է հնարավոր այլընտրանքների համապարձակ ընկալումը: Ավելին, *Այ.Ար.Դի.-ն* 2016թ-ին ներառել է քաղաքացիական շինարարության աշխատանքների վերահսկողություն ***M03 Կիև-***

***Խարկով-Դովժանսկի ճանապարահատվածում, լոթ 3 (կմ126+700 — կմ158+000, կմ185+000 - կմ191+400), լոթ 4 (կմ 164+500 - կմ 170+500)*** ՝ հանձն առնելով FIDIC **համակարգի** «ինժեների» դերը: *Այ.Ար.Դի.-ն* խորհրդատվական ծառայություններ է տրամադրել նաև *M03* ***Կին-Խարկով-Դովժանսկի ճանապարհի (Փուլ II RFP 4 (Լոթ 2.7 – 2.9)) երեք նոր կողանցման շինարարության վերահսկողություն*** և *Supervision of Civil Works on the section of M03* ***Կին – Խարկով – Դովժանսկի ճանապարահատվածի*** *(Փուլ I, RFP 1 (Լոթ 2.1 – 2.3))* ***քաղաքացիական շինարարության աշխատանքների վերահսկողություն:.***

Ավելին, *Այ.Ար.Դի.-ն* կատարել է պայմանագրային ծառայություններ ***<u>Նախագծի մշակում</u> և մոտավոր փաստաթղթավորում,*** *ինչպես նաև գնառաջարկի փաստաթղթերի կազմում ճանապարհային անվտանգության բարելավման (վերակառուցում և կապիալ վերանորոգում) համար՝ ըստ* ***M12 Striy – Ternopil-Vinnytsya-Kyrovograd-Znamyanka (291+240 կմ-ից մինչև 332+052 կմ)*** *ճանապարհահատվածի համար տրված հրահանգների:* Վերոնշյալ ծրագիրը Համաշխարհային բանկի՝ ավելի անվտանգ ճանապարհային միջանցքների զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրի մաս է կազմում:

*Այ.Ար.Դի. Էնջինիըրինգը* վերջին տարիների ընթացքում հաջողությամբ իրականացրել է *M06* ***(Ճանապարհ Կին-Չոպ) ճանապարհի բարեկարգման (180 կմ) աշխատանքների վերահսկողությունը, M07 ճանապարհի Կին-Կովել-Յագոդին, 30+600կմ-ից մինչև 64+000 կմ հատվածի լայնիտալ վերանորոգման աշխատանքների վերահսկողությունը:***

Սերբիայում *Այ.Ար.Դի. Էնջինիըրինգը* իրականացրել է ***E80 (Պրոսեկ – Դիմիտրովգրադ) մայրուղու շինարարական աշխատանքների վերահսկողությունը*** ՝ ըստ FIDIC Պայմանագրի Կարմիր գրքի պայմանների: ՀԲ կողմից վարկով ֆինանսավորվող ծրագիրը բաղկացած է E80 **մայրուղու** շինարարական աշխատանքների վերահսկողությունից Պրոսեկ-Դիմիտրովգրադ (Միջանցք Xc) հատված՝ առանց Կլիֆիկ-Պիրոտ (արևմուտք) ենթահատվածի, ընդհանուր **59.6 կմ երկարությամբ**՝ ներառյալ **43 կամուրջ, 4 թունել, 3 փոխհատում**՝ բացի դրենաժային և օժանդակ աշխատաքների: Ավելին, *Այ.Ար.Դի.-ն* անցյալ տարիների ընթացքում տրամադրել է խորհրդատվական ծառայություններ Բելգրադի կողմնշնցման շինարարության համար, Հատված A: Բատաժնիցա-Դոբանովցի (**մայրուղու 9.7 կմ հատվածի** շինարարություն՝ համաձայն Պայմանագրի FIDIC **Նախագծման և շինարարության պայմանների** (Դեղին գիրք և **Եվրոպական ներդրումային բանկ/ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորում**): *Այ.Ար.Դի.-ն* նաև իրականացրել է ***Նովի Սեդ – Սաբակ – Լոզնիցա ճանապարհի տեխնիկական-տնտեսական հիմնավորումը*** ՝ ***կարծիք հայտնելով նաև Լոզնիցա-Զվորնիկ*** **(դեպի Սարաևո ուղղություն):** Ավելին, Սերբիայում Այ.Ար.Դի.-ին 2009թ-ին կատարել է Նովի Սեդում Ջազելժ կամրջի աշխատանքային նախագծի և մրցութային փաստաթղթերի կազման աշխատանքները: Կամրջի կառուցվածքն առանձնանում է պողպատե երկու կամարներով՝ 220.50 մ – 178.50 մ՝ ընդհանուր 474մ երկարությամբ:

Բուլղարիայում *Այ.Ար.Դի. Էնջինիըրինգը* կատարել է Սոֆիայի օղակաձև ճանապարհի Արևմտյան Կամարի Հատված 2-ի շինարարությա վերահսկողությունը: Ծրագիրը ներառում է **Մայրուղու 5,3 կմ հատվածի** վերանորոգումը, ինչպես նաև ճանապրհային 3 միացում, ծալվող կամուրջ, վերգետնյա անցում և դրանց հետ կապող ճանապարհներ: Ավելին, *Այ.Ար.Դի.-ն* ՀԲ-ի ֆինանսավորմամբ իրականացրել է Թուրքիայի հարևանությամբ գտնվող Մարիցա մայրուղու 3,4 կմ հատվածի շինարարության վերահսկողությունը՝ ըստ FIDIC **Պայմանագրի Կարմիր գրքի պայմանների:** Նաև 2009թ-ին *Այ.Ար.Դի.-ն* իրականացրել է Բուլղարիայի և Հունաստանի միջև ընկած **Ռուդոզեն** սահման տանող ճանապարհի շինարարության վերահսկողությունը՝ ըստ **Պայմանգրի FIDIC կարմիր գրքի պայմանների, իսկ 2010թ-ին՝ Պլեվեն-Նիկոպոլ ճանապարհի վերանորոգման աշխատանքների վերահսկողությունը:**

**Մոնտենեգրոյում** *Այ.Ար.Դի. Էնջինիըրինգը* ***<u>Թունելի շինարարության և Բերանե-Կոլաշին, Լուբնիցե- Ջեգերին ճանապարհի վերակառուցման</u>*** ծրագրի շրջանակում խորհրդատվական ծառայություններ է տրամադրել: Բացի այդ **Մոնտենեգրոյում** *Այ.Ար.Դի.* իրականացնում է հանրապետական և մարզային ճանապարհների արդիականացման ***վերահսկողության աշխատանքներ***՝

վերահսկելով 14,5կմ ճանապարհի, այդ թվումa 2,5կմ թունելի, վերակառուցման աշխատանքները, որոնք իրականացվում են ՎԶԵ բանկի ֆինանսավորմամբ:

Մոլդովայում *Այ.Ար.Դի. Էնջինիըրինգը* վերջին երկու տարիների ընթացքում մեկնարկել է պետական ճանապարհների վերանորոգման աշխատանքների վերահսկողության երեք նոր ծրագիր, որոնք իրականացվել են FIDIC MDBH **պայմանագրի պայմաններին համաձայն:**

- ***R9 Սորոկա-Արխոնեստի ճանապարհի վերանորոգման աշխատանքների վերահսկողություն***, որը ներառում է R9 պետական ճանապարհի 30.95 կմ հատվածի վերանորոգում՝ ՎԶԵԲ բանկի ֆինանսավորմամբ,
- ***R34 Հիչեստի-Լեհովա-Կահուլ ճանապարհի վերանորոգման աշխատանքների վերահսկողություն***, աշխատանքներն իրականացվել են երկու առանձին խմբաքանակով, այսինքն երկու առանձին աշխատանքային պայմանագրով, որոնք ենթակա էին մեկ Խորհրդատուի կողմից տեխնիկական վերահսկողության և պայմանագրային կառավարման.

    *-RSP/W8/01- R34 Հիչեստի-Լեհովա- Կահուլ ճանապարհի վերանորոգում, 0+000 – 42+200*

    *-RSP/W8/02- R34 Հիչեստի-Լեհովա- Կահուլ ճանապարհի վերանորոգում, 42+200 - 83+000*
- ***R6 M1-Յալովենի ճանապարհի վերանորոգման աշխատանքների վերահսկողություն***, ԵՆՄ-ի կողմից ֆինանսավորված **4** երթևեկելի գոտիով ճանապարհի վերանորոգման (**6.55 կմ**, 8,9 մլն եվրո): Ծրագրի աշխատանքները ներառում են Կապիտալ Չիսինոյի արևմտյան հատվածում գոյություն ունեցող ճանապարհի ծածկի նորոգում և ճանապարհի ամրացում, ներառյալ՝ ասֆալտի ստորին շերտերի սառը վերամշակում և նոր ճանապարհածածկի տեղադրում:

Բացի այդ, *Այ.Ար.Դի. Էնջինիըրինգը* Մոլդովայում իրականացրել է երկու այլ կարևոր ծրագիր *M2* ***Չիսինո – Սորոկա ճանապարհին.*** առաջինը՝ ***26+200 կմ –71+165 կմ հատվածի վերանորոգման աշխատանքների վերահսկողություն*** FIDIC MHDB **պայմանագրի պայմաններին համաձայն**, ՎԶԵԲ-ի և ԵՆԲ-ի ֆինանսավորմամբ, երկրորդը՝ ***71+194 կմ– 116+000 կմ հատվածի վերանորոգման աշխատանքների վերահսկողություն***, նույնպես FIDIC կարմիր գիրք պայմանագրի պայմանների համաձայն՝ Հազարամյակների մարտահրավերների կորպորացիայի ֆինանսավորմամբ:

Տանզանիայում *Այ.Ար.Դի. Էնջինիըրինգը* մշակել է Կիլոսա շրջանի **Ենթակառուցվածքների մանրամասն նախագիծ՝ Կիլոսա շրջանում հեղեղի հետևանքով մարդկանց հարկադիր վերաբնակեցման ծրագրի շրջանակում:** Ծրագիրը ներառում է երեք նոր բնակատեղիների ենթակառուցվածքների ամբողջական խորհրդատվական ծառայություններ **(նախագծում, գնումներ), ներառյալ** 32 կմ տարածաշրջանային ճանապարհներ:

Վերջին տարիներին իրականացված աշխատանքները, որոնց մի մասը նշվել է վերը բերված հատվածում, փաստում են հետևյալը.

- *Ենթակառուցվածքների նախագծման, վերահսկողության և տեխսպասարկման աշխատանքների լայն փորձառություն,*

## Որակի ապահովման քաղաքականություն

*Այ.Ար.Դի. Էնջինիըրինգ* ընկերությունը ստացել է **ISO 9001:2015** որակի կառավարման համակարգի համապատասխանության հավաստագիր (Որակի կառավարման համակարգ): Հավաստագիրը տրվել է «Բյուրո Վերիտասը» (Bureau Veritas) թեստավորման, տեսչական ստուգման և հավաստագրման հարցերով զբաղվող ֆրանսիական համաշխարհային կազմակերպությունը, և ճանաչվել է Իտալիայի հավատարմագրման ազգային մարմնի կողմից (ACCREDIA, Հավաստագրերի հավատարմագրման և ստուգման միջազգային համակարգ): սերտիֆիկատը երաշխավորում է հետևյալ ոլորտներում որակի ապահովման ստանդարտները. ***Նախագծմանը նախորդող ուսումնասիրություններ, նախագծում, աշխատանքների վերահսկողություն և տեխնիկական աջակցություն ենթակառուցվածքների ոլորտում***, այն նաև վերաբերում է որակի կառավարման համար անհրաժեշտ ռեսուրսներին, գործընթացներին և ընթացակարգերին:

*Այ.Ար.Դի. Էնջինիըրինգն* այս տարի ստացել է ISO 14001:2015 EMS Էկոլոգիական կառավարման համակարգի և ISO 18001:2007 OHSAS Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման կառավարման համակարգի համապատասխանության սերտիֆիկատ: Բյուրո Վերիտասի կողմից տրված և Բրիտանիայի հավատարմագրման ազգային մարմնի կողմից ճանաչված սերտիֆիկատը երաշխավորում է հետևյալ ոլորտներում որակի ապահովման ստանդարտները. ***ծրագրի կառավարում, նախագծում, աշխատանքների վերահսկողություն և տեխնիկական աջակցություն ենթակառուցվածքների ոլորտում:***

*Այ.Ար.Դի. Էնջինիըրինգ* ընկերության քաղաքականությունների հետ մեկտեղ Որակի ապահովման համակարգը ծրագրերի իրագործման և կառավարման անբաժան մասն է կազմում: Որակի ապահովման ստանդարտը կիրառվում է ծրագրի կառավարման գործընթացում: Հետագայում, շինարարական աշխատանքների Որակի ապահովան աուդիտներ են անցկացվում:

***Որակի ապահովման համակարգը ընկերության պաշտոնական քաղաքականություն և ընթացակարգ է՝ ապահովելու, որ ընկերության խորհրդատվական ծառայությունները իրականացվեն լավագույն մասնագիտական ստանդարտներին և վերաբերելի միջազգային ստանդարտներին համապատասխան:***







